ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 հունիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Վարդենիս գյուղ Փոքր Մասրիկ 1-ին փողոց 40

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ղեկավարի որոշում 03/05/2024թ. N 0290-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-092-0013-0018
Մակերեսի չափը (հա)՝ 1.2
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 18062024-05-0076, գաղտնաբառ՝ BZQGK85R7Y9J

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԿՐՏԻՉ ՄԱՐԵԳԱՍՊԱՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 18062024-05-0076, գաղտնաբառ՝ BZQGK85R7Y9J

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ ,Կենտրոնականհրապարակ№7
Հեռ. 060650035
Կայքgegharkunik.mtad.am
Էլ. փոստgegharkunik@mta.gov.am
N_____
------- ----------2024թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խաչատրյան

Հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 09.04.2024թ. N ԳՍ/20.1/11309-2024 գրությունը՝ Վարդենիս համայնքի Արեգունի, Կախակն, Փ. Մասրիկ և Մաքենիս բնակավայրերում նախատեսվող կրթահամալիրների կառուցման համար անհրաժեշտ հողամասերի տրամադրման վերաբերյալ հարցերը առաջարկվում է քննարկել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ, հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու ուղղությամբ և մարզպետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

10.04.2024

X _____
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ՔՀԵԿ վարչության
Հողաշինության բաժին Մ. Ղուրշուդյան
Հեռ. 060650611

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր
Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

ՀՀ մարզպետներին (ըստ ցուցակի)

Ի լրումն մեր 07.03.2024 թվականի թիվ ԳՍ/20.1/7580 հանձնարարականի՝ խնդրում եմ համագործակցել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ և հնարավորինս սեղմ ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցներ հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու ուղղությամբ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

4/9/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

№ ԳՍ/20.1/11309-2024 **“___“ _____2024 թ.**

Կատարող՝ Սահակ Մանուչարյան
Հեռ.՝ 010 51 51 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N_____ « » _____2024թ.

ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարար
պարոն Գ. Սանոսյանին

Ի իլրումն ՀՏԶՀ 04.03.2024թ.
Թիվ Ե/01/559-24 գրության

Հարգելի պարոն Սանոսյան

Ինչպես տեղյակ եք, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «ՀՀ կառավարության «մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 2093-Ն որոշման հավելված 1-ով հաստատված դպրոցների ցանկից 123 դպրոցների կառուցման/վերակառուցման պատվիրատու նախատեսվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /այսուհետ՝ Հիմնադրամ/:

Դպրոցների կառուցման ընթացքում որոշում է կայացվել հնարավորինս չքանդել գոյություն ունեցող դպրոցական շենքերը՝ կառուցման ընթացքում աշակերտների այլ վայր տեղափոխման գործընթացում առաջացող ծախսերի կրճատման նպատակով: Այս համատեքստում ուսումնասիրվել են համայնքների կողմից առաջարկվող նոր հողակտորներ և ընտրվել են այն դեպքերը որտեղ հնարավոր է առաջնորդվել վերոնշյալ մոտեցմամբ:

Բացի այդ, առկա են նաև որոշակի թվով դպրոցներ որոնց համար անհրաժեշտ է գոյություն ունեցող դպրոցի հարևանությամբ իրականացնել հողհատկացումներ: Այս գործընթացի արդյունքում նույնպես հնարավոր կլինի չքանդել գոյություն ունեցող

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31 K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
Հեռ. (37410) 247 123 Tel. (37410) 247 123

դպրոցական շենքերը, հետևաբար շինարարության ընթացքում չի առաջանա նաև աշակերտների տեղափոխության անհրաժեշտություն։

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը, համագործակցելով Հիմնադրամի, Պետական գույքի կառավարման կոմիտեի և համապատասխան համայնքների հետ ապահովել հողակտորների Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերության և նվիրաբերված հողակտորների իրավունքի պետական գրանցման գործընթացը։

Հարկ ենք համարում նշել, որ հատկացված նոր հողակտորների (ոչ ընդլայնումներ) իրավունքի պետական գրանցման գործընթացը անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս արագ, քանի որ դրանց վկայականների բացակայությամբ պայմանավորված կխոչընդոտվի նախագծային աշխատանքների իրականացումը, քանի որ Հիմնադրամը չի կարողանա դիմել համապատասխան մարմիններին ինչպես ճարտարապետահատակագծային առաջադրանքի, այնպես էլ համապատասխան տեխնիկական պայմանների (ջուր, կոյուղի, գազ, էլեկտրաէներգիա) ստացման համար։

Դպրոցների ցանկը կցվում է։

Առդիր էլեկտրոնային նյութ։

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն X 3/26/2024 Ս. Բաղինյան

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝
Հ. Գալստյան հեռ.՝ 093-973-311

Հ/Հ	Մարզ	Համայնք	Բնակավայր	Դպրոցի անվանումը	Ծանոթություն
1	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Վարդենիս համայնք	Արեգունի գյուղ	Արեգունու կրթահամալիրի կառուցում	Նոր տարածքի տրամադրում
2	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Վարդենիս համայնք	Կախակն գյուղ	Կախակնի կրթահամալիր	Նոր տարածքի տրամադրում
3	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Վարդենիս համայնք	Փոքր Մասրիկ գյուղ	Փոքր Մասրիկի կրթահամալիրի կառուցում	Հարակից տարածքի տրամադրում
4	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Վարդենիս համայնք	Մաքենիս գյուղ	Մաքենիսի կրթահամալիրի կառուցում	Նոր տարածքի տրամադրում